Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
փետրվարի 27-ի N 197-Ն որոշման

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ.
ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՆՋՐԴԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՂ ԵՎ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԾՐԱԳԻՐ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 06 ԲԱԺԻՆ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 04 ԽՈՒՄԲ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 01 ԴԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը 3
Իրավիճակի վերլուծություն 4-5
Ծրագրի ընդհանուր նպատակը 6
Ծրագրի իրավական հիմքերը.....6-7
Ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները 7
Ծրագրի խնդիրները և դրանց կապը ծրագրի նպատակի հետ 8
Ծրագրի կառուցվածքը (միջոցառումները) և իրականացման եղանակը...8
Ակնկալվող արդյունքները ---------- 8
Ծրագրի գնահատման չափանիշները 9
Հավելված N 1 10-11

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքը խոշորացված համայնն ընգրկում է 3 գյուղական բնակավայրեր՝ Շնող, Թեղուտ, քարկոփ:

Շնող համայնքի *Շնող* գյուղի պատմությունը սերտորեն առնչվում է Կայծոն ամրոցի հետ /10-11 դդ./: Կայծոն-Շնող անվանափոխությունը կատարվել է 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին:

Շնող համայնքի *Թեղուտ* գյուղը հիմնադրվել է հարևան Շնող գյուղի բնակիչների կողմից 20-րդ դարի սկզբին: Բնակիչների նախնիները մասամբ բնիկ լոռեցի են, մասամբ տեղափոխվել են Սյունիքի, Ջավախքի և Արցախի տարածաշրջաններից, Սևանի ավազանից՝ 17-18-րդ դդ:

Շնող համայնքի *Քարկոփ գյուղը*, որը խորհրդային տարիներին ուներ ավանի կարգավիճակ, հանրությանը ավելի հայտնի է որպես Շեբզավոդ» (ռուս.՝ Шебзавод) անվամբ, որը գալիս է խորհրդային տարիներին Քարկոփին տրված ռուսերեն անունից: Անկախացումից հետո Շեբզավոդը թարգմանվեց բառացի և դարձավ «Քարկոփ»: Բնակավայրը հիմնադրվել է 1930-ականներին՝ բնակավայրին կից գտնվող բազալտի և գրանիտի վերամշակմամբ զբաղվող գործարանի շուրջ:

Շնող համայնքը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի արևելյան մասում՝ Դեբեդ գետի աջափնյա սարավանդի և հարակից ձորերով ու բլուրներով պատած բարդ ռելիեֆով տարածքի վրա: Վերջինս հյուսիս-արևմուտքից կտրվում է Դեբեդի կիրճով (գյուղին հարող մասում մինչև 200 մ խորությամբ):

Կլիման բարեխառն է, չափավոր ու մեղմ ձմեռներով, մոտիկ է չոր արևադարձայինին: Տարեկան միջին ջերմաստիճանը 110 C⁰ է, առավելագույնը՝ +38 C⁰, նվազագույնը՝ -22 C⁰, մթնոլորտային տեղումների տարեկան միջինը՝ 55 մմ: Գլխավոր գետը սահմանակից Դեբեդն է՝ Շնող վտակով: Ծովի մակերևույթից բարձր է 670 մ-ով: Գյուղը շրջապատող անտառները հարուստ են արժեքավոր ծառատեսակներով, վայրի պտուղներով, հատապտուղներով, անասնակերով: Լեռնալանջերը, նախալեռնային տարածքները, գետահովիտները պատած են արգավանդ, բարեբեր հողատարածություններով: Համայնքը տեղակայված է Դեբեդի վտակ Շնող գետի աջ ափին, Ալավերդի քաղաքից 18 կմ հեռավորության վրա՝ լեռնային անտառոտ վայրում:

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շնող խոշորացված համայնքի բնակիչների եկամտի հիմնական աղբյուրներից են գյուղատնտեսությունն ու այգեգործությունը, որպիսիք սերտորեն կապված են բնապահպանական և կլիմայական պայմանների հետ, այն տրամաբանությամբ, որ չոր ու երաշտային տարիներին էականորեն նվազում են ինչպես գյուղատնտեսական աշխատանքների արդյունքում ստեղծվող բարիքների, այնպես էլ անասնաբուծության ծավալները և հակառակը, բարենպաստ կլիմայական պայմանների և բնապահպանական թիրախային միջոցառումների իրականացման արդյունքում՝ զգալիորեն բարելավվում:

Խնդիրը կայանում է նրանում, որ խորհրդային տարիներից ի վեր տարեցտարի ավելացող անջրդի և չմշակվող հողատարածություններն անվերականգնելի վնաս են հասցրել թե՛ շրջակա միջավայրին (օդի աղտոտվածություն, փոշու ավելացում, թթվածնի պակաս, տափաստանների վերածվող ամայի տարածությունների ավելացում, բուսականության և ընդհանրապես՝ կանաչապատ տարածքների վերացում, կենդանական աշխարհի վերացում և այլն), և թե՛ բնակչության առողջությանը: Հետևաբար, վերջին 4-5 տարիների ընթացքում, համայնքի նախաձեռնող խմբերի կողմից մշակվել և տարբեր սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում համայնքում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված գյուղատնտեսական նշանակության արդիական տեխնիկայի ձեռբերմանը (էքսկավատոր բարձիչ, 62 և 220 ձ/ու հզորությամբ տրակտորներ և անհրաժեշտ սարքավորումներ, կոմբայն, շարքացան, գութան, կուլտիվատոր), ոռոգման, խմելու ջրագծերի անցկացմանը, բնապահպանական և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ իրավիճակի բարելավմանը, առողջապահության բարձրացմանը, կանաչապատմանը, արևային լուսատուների անցկացմանը, այգիների հիմնման և դրանց տարածականության ապահովմանը, որոնց գրեթե բոլորի հիմքում մշտապես ընկած են եղել բնապահպանական և առողջապահական խնդիրների լուծման հրամայականները:

Ասվածի մասին է վկայում նաև այն, որ Համայնքի նախաձեռնությամբ և ՀՀ բնապահպանության նախարարի 22.08.2008թ. N 295-Ա և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 14.08.2008թ. N 151-Ա համատեղ հրամանի հիմքով շուրջ 7 տարի Շնող համայնքում իրականացվում է այգեհիմնման և դրանց տարածականության ապահովման նախադեպը չունեցող միջոցառումներ, որի արդյունքում համայնքի բազմաթիվ հողատարածքներում, այդ թվում՝ բնակիչներ սեփականություն հանդիսացող հողամասերում մինչ օրս հիմնել և խնամվում է 159 հա հեկտար պտղատու այգիներ:

Այնուհանդերձ, ցավով պետք է փաստել, որ բնապահպանական, գյուղատնտեսական, ինչպես նաև նմանօրինակ բազմաթիվ ծրագրերի իրացումը հիմնականում իրականացվում է քիչ թե շատ ոռոգման հնարավորություններով ապահովված հողատարածքներում, որի

արդյունքում շուրջ 405 հա մակերեսով հողատարածքներում ոռոգման ցանցի բացակայության արդյունքում գյուղատնտեսության զարգացմանն ուղղված բազմաթիվ նախաձեռնություններ անարդարացիորեն զրկվում են կյանքի կոչվելուց:

Առկա ոռոգման ջրագծի խողովակների մաշվածության (անցկացվել են դեռևս խորհրդային տարիներին), անորակ լինելու, ինչպես նաև սխալ ջրաբաշխման պատճառով չի ոռոգվում նաև համայնքի գրեթե բոլոր տնամերձ հողատարածքները, որի պատճառով համատարած չորանում են պտղատու ծառերը՝ առաջ բերելով բանավակնին լուրջ բնապահպանական խնդիրներ: Պետք է նշել նաև, որ ոռոգման ջրի բացակայության պատճառով, շատ տնտեսվարողներ ստիպված են լինում տնամերձ հողամասերը ոռոգել խմելու ջրով, ինչը ոչ միայն վնասակար է գյուղատնտեսական չափանիշներին չհամապատասխանելու առումով (քլորի առկայություն), այլև, ի համեմատ ոռոգման ջրի, բավականին թանկ է և եկամտի աղբյուր չունեցող որոշ բնակիչների համար՝ նաև անհասանելի:

Առավել մեծ խնդիր է համայնքի հարավ-արևմտյան հողատարածքների ոռոգումն ապահովող և «Շնող» գետից սնուցվող ոռոգման ջրագծի անմխիթար վիճակը, որի պատճառով, համայնքի հարակից անտառներից սկիզբ առնող և գրեթե քայքայված խողովակաշարերով շուրջ 5 կմ դեպի համայնք ձգվող ջրագծի, շահագործման համար ոչ պիտանելության պատճառով, չոր եղանակային պայմաններում «Շնող» գետի ջրի ծավալի շուրջ 80%-ն ուղղակի անհետանում է՝ որևէ կերպ չծառայելով իր նպատակին: Արդյունքում, գետի ջրի ծավալների անհիմն կորստի պատճառով տուժում է ոչ միայն շրջակա միջավայրն ու գետաբերանի բուսական աշխարհը, այլև՝ ողջ գյուղատնտեսությունն ընդհանրապես:

Հետևաբար, վերը նշված բնապահպանական խնդիրները լուծելու և գյուղատնտեսական նշանակության շուրջ 405 հա անջրդի հողամասերը ոռոգման ջրով ապահովելու նպատակով անհրաժեշտ է արդիականացնել համայնքի անտառներից դեպի համայնք ջրատարը՝ միաժամանակ լուծում տալով թե՛ բնապահպանական, թե՛ գյուղատնտեսական, և թե՛ առողջապահական խնդիրներին, որպիսի նախաձեռնությունը հնարավոր է իրականացնել արդեն իսկ գոյություն ունեցող ջրի ակունքից նոր կետի միացման միջոցով նոր՝ շուրջ 5 կմ երկարությամբ ինքնահոս ջրամատակարարման համակարգ կառուցելու միջոցով: Ծրագրով կառուցվող ջրամատակարարման համակարգի միջոցով ջուրը կտեղափոխվի համայնքապատկան թվով 3 ջրավազաններ՝ 500, 1000, 1200 տոննա հզորությամբ:

2.ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել ազդակիր Շնող համայնքի բնական միջավայրը, ավելացնել կանաչապատ տարածքներն ու ապահովել շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը՝ միաժամանակ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանն ու բնակչության առողջության ամրապնդմանը:

Ծրագրի նպատակն է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից, սուբվենցիաների տեսքով, Շնող համայնքին կատարվող մասհանումների գումարներով լուծել համայնքում առկա բնապահպանական և առողջապահական խնդիրները, այն է՝ կառուցել նոր ոռոգման ջրագիծ, ինչը նախ՝ շուրջ 50%-ով կկանխի Շնող գետի ջրի ծավալների անհիմն կորուստը՝ նպաստելով շրջակա միջավայրի բարելավմանն ու ջրի սակավության պատճառով ամայացման գործընթացների բացառմանը, և բացի այդ կնպաստի ոռոգման համար ոչ պիտանի ջրագծի անընդմեջ վերանորոգումների համար ծախսվող համայնքային բյուջեի խնայողությունները հրատապություն ներկայացնող այլ ոլորտներին, տվյալ դեպքում առողջապահական խնդիրների լուծմանն ուղղելու (Շնողի բուժամբուլատորիայի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը): Բացի այդ, ծրագրի կենսագործման արդյունքում գյուղատնտեսության և այգեգործության համար կստեղծվեն առավել նպաստավոր պայմաններ՝ ապահովելով ոլորտների կայուն զարգացում:

Ծրագիրը ներառում է.

1. Շնող համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի պահպանության ու վերականգնման միջոցառումներ:
2. Համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ

3.ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ծրագիրն ամբողջությամբ համապատասխանում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12–րդ հոդվածով սահմանված համայնքի պարտադիր խնդիրների իրականացման օրենսդրական պահանջներին, համաձայն որոնց համայնքի գույքի կառավարումը (1–ին մաս 3–րդ կետ), համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը (1–ին մաս, կետ 6) համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների

պահպանումն ու շահագործումը (1–ին մաս 10–րդ կետ), ինչպես նաև համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը (1–ին մաս 14–րդ կետ) հանդիսանում են պարտադիր կատարման ենթակա ուղղություններ:

4. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տվյալ դեպքում, ծրագրի մասնավոր շահառուները Շնող խոշորացված համայնքի բոլոր բնակիչներն են, քանի որ ջրագծի կառուցմամբ լուծվող բնապահպանական խնդիրներն անմիջականորեն առնչվում են հենց վերջիններիս իրավունքների իրացման հետ:

Իսկ որպես ընդհանուր շահառու հանդես են գալիս ողջ համայնք ու Հայաստանի Հանրապետությունն ընդհանրապես, քանի շրջակա միջավայրի պահպանության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակի պահպանմանն հրամայականներն ամրագրված են թե՛ կառավարության գերակա խնդիրներում և միջոցառումների ծրագրերում, և թե՛ միջազգային հեղինակավոր փաստաթղթերում:

Միաժամանակ նկատի ունենալով ջրագծի կառուցմամբ լուծվող հարակից խնդիրների հրատապությունը ևս, ակնկալվում է, որ ծրագրի ամբողջական իրականացումը լուրջ խթան կհանդիսանա գյուղացիական տնտեսությամբ զբաղվող տնտեսությունների թվաքանակի աճին, ներկայիս՝ 20 %-ի փոխարեն, առաջիկա 5 տարիների ընթացքում հասցնել 35-40 %-ի: :

Հիշյալից բացի, խիստ անմխիթար վիճակում գտնվող ջրի ակունքի և ոռոգման ջրագծի անընդհատ վերանորոգման համար համայնքային բյուջեից կատարվող ծախսերի կրճատումը իրական հնարավորություն կստեղծի խնայված միջոցներն ուղղել համայնքի բնակիչների առողջական և սոցիալական բարեկեցության ապահովման այլ ուղղությունների ևս:

5. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏ

Ինչպես նշվել է վերևում, ծրագրի հիմնական խնդիրը **ազդակիր Շնող համայնքի բնական միջավայրի բարելավումն ու շրջակա միջավայրի պահպանությունն է, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի բյուջեից խնայված միջոցներն ուղղել բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների ապահովմանը:**

Հիշյալից բացի, Ծրագրի ամբողջական իրականացմամբ կլուծվի նաև համայնքի՝ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողների շուրջ 405 հա հողատարածքների ոռոգման խնդիրը:

Առանձնահատուկ պետք է նշել, որ Ծրագրի իրականացմամբ կլուծվեն բնապահպանական այնպիսի լուրջ խնդիրներ, ինչպիսիք են՝

1. «Շնող» գետի ջրի ծավալների շուրջ 70%-ի անհիմն կորստի բացառում:
2. Գետի ջրի կենդանական աշխարհի պահպանության ապահովում
3. Գետաբերանի և հարակից տարածքների բուսական և կենդանական աշխարհի ոչնչացման կանխում

4. Ջրի ծավալների նվազեցումը կանխելու միջոցով տարածքների ամայացման կանխում
5. Անջրդի հողատարածքները ոռոգման ջրով ապահովելու միջոցով օդի աղտոտվածության նվազեցում
6. Շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավում

Ծրագրի ամբողջական կենսագործման արդյունքում համայնքը կունենա իրական ֆինանսական խնայողություններ, որիսիք կուղղվեն բնակչության առողջապահական խնդիրների լուծմանն ու համայնքի բուժամբուլատորիան արդի սարքավորումներով վերազինելուն:

6.ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ) ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ծրագիրը հավանության արժանանալուց հետո, նախատեսվում է հայտարարել մրցույթներ՝ ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար՝ 2 000 000 ՀՀ դրամ և ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների համար՝ 90 500 000 ՀՀ դրամ արժողությամբ: Մրցույթի հաղթող ճանաչված կազմակերպությունները կկատարեն համապատասխան աշխատանքները:

7.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ամբողջական իրականացման արդյունքում էականորեն կբարելավվի ազդակիր Շնող համայնքի բնական միջավայրը, նպաստավոր պայմաններ կստեղծվեն շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար, հնարավորություն կստեղծվի շահագործման համար ոչ պիտանի ջրագծի վերանորոգման համար ամեն տարի օգտագործվող շուրջ 2000 000 ՀՀ դրամ խնայված գումարն ուղղել բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների ապահովմանը (նախատեսվում է համայնքի բուժամբուլատոիայի համար բժշկական սարքավորումների ձեռքբերման արդյունքում համայնքի բնակիչներին ապահովել անվճար բուժզննմամբ):

Բացի այդ, համայնքի բնակչության համար հնարավորություն կստեղծվի զարգացնել գյուղատնտեսական կուլտուրաների և այգեգործության ուղղությունները՝ ապահովելով կայուն եկամտաբերություն:

Հնարավորություն կստեղվի համայնքում ներդնել կաթիլային ոռոգման արդյունավետ համակարգեր՝ նպաստելով ջրային պաշարների պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը:

8. ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի գնահատման չափանիշ կարող է լինել՝

1.Համայնքում բնապահպանական խնդիրների լուծումն ու շրջակա միջավայրի պահպանությունը, օդի աղտոտվածության նվազեցումը, ջրային ռեսուրսների անհիմն վատնման կանխումը, անապատացման կանխումը

2.Համայնքի բնակչության առողջական վիճակի պահպանումը, ամրապնդումը: Առաջարկվող ծրագիրն ընդգրկվել է ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի 2022թ. բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագրի նախագծում՝ հաշվի առնելով դրանց բնապահպանական և առողջապահական ուղղվածությունը և այլ ֆինանսական աղբյուրների հաշվին /մասնավորապես համայնքային բյուջեի միջոցներով/ իրականացման դժվարությունը:

Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքը կլուսաբանվի համայնքապետարանի պաշտոնական կայքում, տեղական հեռուստատեսությամբ և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Հավելված

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԾՐԱԳԻՐ

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՆՋՐԴԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՂ ԵՎ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ	Համայնքի ոռոգման գրագծի կառուցում, համայնքի բոլոր բնակիչների համար բարեկեցիկ պայմանների ապահովում , համայնքի բնակիչների առողջության պահպանման համար նախատեսվող ծրագրերի իրականացում, Շնողի բուժամբուլատորիայի համար արդի բժշկական սարքավորումների ձեռքբերում	Շնող խոշորացված համայնքում բնապահպանական խնդիրների լուծում, համայնքի՝ Շնող, Թեղուտ գյուղերի՝ գյուղատնտեսական գործունեության առումով բավականին նպաստավոր պայմաններով շուրջ 80 հա հողատարածքների ու Շնող համայնքում առկա շուրջ 1060 բնակելի տներն ու 325 հա տնամերձ հողամասերի՝ ոռոգման ջրով ապահովում, բնակիչների սոցիալական կյանքի բարկեցության բարձրացում, Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար արդի բժշկական սարքավորումների ձեռքբերում

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ	Համայնքի ոռոգման գրագծի կառուցում, համայնքի բոլոր բնակիչների համար բարեկեցիկ պայմանների ապահովում , համայնքի բնակիչների առողջության պահպանման համար նախատեսվող ծրագրերի իրականացում, Շնողի բուժամբուլատորիայի համար արդի բժշկական սարքավորումների ձեռքբերում	Շնող խոշորացված համայնքում կլուծվեն բնապահպանական խնդիրները, համայնքի՝ Շնող, Թեղուտ գյուղերի՝ գյուղատնտեսական գործունեության առումով բավականին նպաստավոր պայմաններով շուրջ 80 հա հողատարածքներն ու Շնող համայնքում առկա շուրջ 1060 բնակելի տներն ու 325 հա տնամերձ հողամասերը ոռոգման ջրով կապահովվեն, կբարձրանան բնակիչների սոցիալական կյանքի բարկեցության պայմանները, Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար արդի բժշկական սարքավորումներ ձեռք կբերվեն
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	Ծրագիրը հավանության արժանանալուց հետո, նախատեսվում է ըստ կազմված ծավալաթերթ–նախահաշվի հայտարարել մրցույթ՝ ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների համար՝ 90 500 000 ՀՀ դրամ արժողությամբ: Մրցույթի հաղթող ճանաչված կազմակերպությունները կկատարեն համապատասխան աշխատանքները: Բացի այդ կկազմակերպվի Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար արդի բժշկական սարքավորումների ձեռքբերման գործընթացը Ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 90 500 000 ՀՀ դրամ նախագծանախահաշվային աշխատանքների արժեքը՝ 2 000 000 ՀՀ դրամ:	Համայնքը կունենա ամբողջովին նոր ոռոգման ջրագիծ:Շնողի բուժամբուլատորիան կվերազինվի անհրաժեշտ արդիական բժշկական սարքավորումներով: Ծրագրի հավանության արժանանալու դեպքում համայնքի կողմից կհայտարարվի մրցույթ, հաղթող կազմակերպության հետ կկնքվի պայմանագիր, և աշխատանքները կիրականացվեն 6 ամսվա ընթացքում:

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ